ՄԻՋԱՏՆԵՐՈՒՆ ԽԱՅԹՈՒԱԾՔԻՆ ԴԷՄ

Ամրան ընթացքին բազմաթիւ միջատներ կան, որ կը յարձակին ու կը խայթեն մարդոց մորթը։ Այդ միջատներն են մժեղները, ճանճերը, մեղուները, պիծակները, իշամեղուները, մրջիւնները, կարմրուկները (rougel), մլուկները։

Մժեղները կը գտնուին խոնաւ և ճահճային շրջաններու մէջ։ Միշտ էգերն են, որ կը խայթեն, արուները կը սնանին ծաղիկներու հիւթով։ Ընդհանրապէս կը յարձակին գիշերը։ Այնպէս որ, պաշտպանուելու համար, խելացութիւն է փակել պատուհանները դեռ լոյս չվառած։ Կամ հոտաւէտ նիւթեր այրել, փախցնելու համար զանոնք։ Եթէ առանց մժեղարգելի (moustiquaire, ֆիպիինլիք) էք և ենթակայ՝ մժեղներու խայթուածքին, կրնաք քանի մը կաթիլ քարիւղ աւելցնել քիչ մը վազէլինի մէջ և քսել մարմնին բաց տեղերուն։

Մժեղներուն խայթուածքը քիչ մը տաքութիւն կուտայ մորթին, տեսակ մը այրուցք, յետոյ կ'ուռի։ Մժեղները, ասկէ զատ, կը փոխադրեն ճահճատենդն ու դեղին տենդը։

Խայթուածքին ցաւը ամոքելու համար, քսել Քոլոնեայի ջուր, կամ ասիտ ֆէնիքի. կամ ֆորմոլի չափազանց թեթև լուծոյթ մը, կամ ջրախառն ամոնեաք կամ քացախ. վրայէն քիչ մը pommade à l'oxyde de zinc, եթէ պէտք կայ։ Զի բաւեր միայն պաշտպանուիլ, այլ պէտք է նաև փճացնել մժեղները։ Ասոր համար՝ հանգչող ջուրերուն վրայ պէտք է թափել խաւ մը քարիւղ, որպէսզի նոր մժեղներ չծնին։

Ճանճերը կը գտնուին ամէն տեղ։ Ընդհանրապէս վտանգաւոր չէ անոնց խայթուածքը։ Եւ սակայն կան մասնաւոր ճանճեր, որոնք կը փոխադրեն ածխախտը (charbon)։ Միեւնոյն ատեն իրենց թաթերով մանրէներ կը փոխադրեն կերակուրներու վրայ։ Ուստի ժանտախտի, ժանտատենդի, թանջքի, նոյնիսկ հիւծախտի տարածման մէջ առանձին դեր մը կը կատարեն։ Այս պատճառաւ, ուշադրութիւն ընել և թոյլ չտալ որ ճանճերը վարակեն ձեր սնունդը։ Մասնաւորաբար հեղուկ սնունդները, ամառ ատեն, անգամ մը եւս եռացնել՝ ուտելէ առաջ։ Հազար տեսակ միջոցներ կան փճացնելու համար ճանճերը։ Բայց այդ միջոցներէն մեծ մասը օգուտ մը չի՛ ներկայացներ։ Աւելի լաւ է փակել պատուհանին փեղկերը, թերաստուեր մը ձգելով սենեակին մէջ, և երբեմն առաջ բերել օդի յորձանքներ։

Մեղուին, իշամեղուին և պիծակներուն խայթուածքները կը ցաւին, որովհետև խայթոցին հետ մորթին մէջ կը մնայ թոյն մը։ Անմիջապէս կը սկսի ուռիլ եւ այրիլ։ Շրթունքներու, թարթիչնե-

րու և վիզին վրայ եղած խայթուածքները այնպէս կ'ուռին որ, եթէ քանի մը տեղէ խայթուած են, մահ կը պատճառեն։

Այսպիսի խայթումներու պարագային՝ ծծել կամ որեւէ ձեւով հանել խայթոցը։ Եթէ ծծէք, ուշադրութիւն ըրէք, որ ձեր բերանին մէջ վէրք չգտնուի։ Եւ անմիջապէս թքէք։ Ցեռոյ լաթ մը թաթխեցէք քացախի, ամոնեաքի կամ Քոլոնեայի մէջ և դրէք վրան։ Կարելի է նաև մածուն քսել։

Մրջիւններուն խայթուածքը եւս կարմրութիւն կը պատճառէ մորթին վրայ, որ անմիջապէս կ'ուռի, սաստիկ կը քերուի և կ'այրի։ Ցաճախ կը թմրի ամբողջ ոտքը կամ ձեռքը (ուր կը գտնուի խայթուածքը)։ Դարմանը նոյնն է։

Կարմրուկը փոքրիկ միջատ մըն է տրապէզի ձեւով և կարմիր գոյնով։ Երեւան կուգայ ամրան վերջը և կ'ապրի պարտէզներուն մէջ լուբիաներուն և խոտերուն վրայ։ Տաքատին տակէն կը բարձրանայ վեր, կը խայթէ և մորթին մէջ կը մտնէ ու կը կորսուի։ Մորթը կը սկսի սաստիկ քերուիլ և այրիլ։ Պենզինախառն ջուրով լսւալ և չփել մարմինը, մինչև որ թափի միջատը։

Մլուկներուն խայթուածքին դէմ գործածել քացախախառն ջուր։ Իսկ զանոնք անհետացնելու համար, պէտք է քարիւղով կամ ֆորմոլով օծել մահճակալները և խիստ մաքուր բռնել ամէն կողմ։

Բժ. Շ. ԱՑՎԱՋԵԱՆ

ՔԱՂՑԿԵՂ ԵՒ ԳԱՐԵՋՈՒՐ.— Ֆրանս. բժշկական թերթ մը քննութիւն մը կատարելով, տեսած է որ գարեջրատան աշխատաւորները շատ քիչ ենթակայ են քաղցկեղի։ Գարեջուրին այս բարերար ազդեցութիւնը վերագրելի է մակարդին (*levure*)։ Փրոֆ. Տէլպէ վերջերս ցոյց կուտար նաեւ մագնէզիումի աղերուն (*chlorure de magnésium*) դերը քաղցկեղին բժշկութեան մէջ։ Արդ, կը թուի թէ այդ մետաղին աղերը գարեջուրին մակարդին հետ կրնան կազմել լաւագոյն դարմանը քաղցկեղէ տառապողներուն համար։

ՍՐՏԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ ԴԷՄ.— Վերջերս Փարիզի մէջ կազմուեցաւ նոր ընկերութիւն մը, որուն անունն է ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ՍՐՏԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ ԵՆԹԱԿԱՆԵՐՈՒՆ։ Արդարեւ, տեսնուած է որ հիւծախտի չափ տարածուած են սրտի հիւանդութիւնները։ Ըստ այս ընկերութեան ծրագրին, երիտասարդները, որոնք սիրտի կազմախօսական հիւանդութիւն ունին, պիտի դրուին յարմար գործերու մէջ, իսկ ծերունիներուն նիւթական օժանդակութիւններ պիտի ըլլան եւ հիւանդանոցներու մէջ պիտի զետեղուին։ Սիրտի հիւանդութենէ տառապողներուն պիտի տրուին մասնաւոր տետրակներ, յանկարծական արկածներու պարագային բժիշկներուն ցոյց տալու համար։